

ՆՁՆԵՐԻ ԿՈՂՐԱՑՈՒ ՄԵՂՈ ԱՂԱՆԴՈՑԻՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՆՈՒՆ
ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ԱՐԵՎՄՏԱՆ

Բաճաթիբական լիտուրյուենների ղեկավար. պրոֆեսոր

Հինգերորդ դարի հայ խոշոր մտածող Նիկի Կողրացու «Եղծ աղանդոց» հոշակավոր երկը, լինելով հայ փիլիսոփայական-քննադատական մտքի հնադույն կարևոր հուշարձան, միաժամանակ խիստ արժեքավոր ներդրում է ընդհանուր դիտության պատմության մեջ:

Այդ երկի մասին դրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Նրա հանդեպ ցուցաբերված հետաքրքրությունն արտահայտվել է նաև թարգմանություններով: Կատարվել են «Եղծ աղանդոցի» թե՛ մասնակի (հատվածական), թե՛ լրիվ թարգմանություններ՝ ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և արևմտա-աշխարհարար լեզուներով: Թողնելով մասնակի թարգմանությունները՝ հիշենք ամբողջականները:

Առաջին ամբողջական թարգմանությունը ֆրանսերեն լեզվով է՝ կատարված ֆրանսիացի հայագետ Ֆլորիանի ձեռքով: Հրատարակվել է 1853 թ., Փարիզում: Բանասիրության մեջ սա հաջողված թարգմանություն չի համարվում: Ավելի քան հարյուր տարի անց (1959 թ.) նույն լեզվով լույս տեսավ հայագետ Լ. Մարիենի կատարած թարգմանությունը (Շ. Մերսիեի օժանդակությամբ), որն իր որակով ու հարազատությամբ ավելի բարձր է կանգնած նախորդից, թեև անթերի չէ: Գերմաներեն առաջին ամբողջական թարգմանությունը պատկանում է գերմանացի հայագետ Հ. Շմիդին, որին այդ պործում մեծ օգնություն է ցույց տվել Վիննայի Միխայիլայան միաբան Գ. Գալմաթյանը: Այդ թարգմանությունը, որ ընդհանուր առմամբ հաջող է, լույս տեսավ 1900 թ., Վիննայում: Նույն լեզվով երկրորդ լրիվ թարգմանությունը կատարել է Ս. Վերբեր և հրատարակել 1927 թ., Մյունխենում: 1968 թ. լույս տեսավ ռուսերեն՝ Վ. Չալոյանի ամբողջական թարգմանությամբ:

Սեր խնդիրը չէ այստեղ մեկ առ մեկ քննել այդ թարգմանությունները: Միայն ցանկանում ենք րեկոնստրուկցիոն ընկալությանը ներկայացնել մեր որոշ դիտողություններ հայերենից հայերեն կատարված առաջին միակ լրիվ թարգմանության մասին: Խոսքը վերաբերում է Գ. Խաչատրյանի (Տրապիզոն) արևմտահայերեն թարգմանությանը:

Գ. Խաչատրյանը, որպես դրաբարի թարգմանիչ, հայ բանասիրության մեջ հայտնի է իր նշանակալից վաստակով: Իսկ այդ վաստակի մեջ էլ առանձնակի տեղ ունի Նիկի Կողրացու երկի արևմտա-այերեն թարգմանությունը, որն արժանի է բարձր գնահատության: Միանգամայն իրավացի էին այն բանասերները (Վ. Առաքելյան, Ս. Քուլանջյան և այլք), որոնք ժամանակին դրական խոսք ասացին այդ թարգմանության վերաբերյալ: Դրա կարևորության մասին վկայում է այն հետաքրքրությունը, որ հանդես է բերվում նրա նկատմամբ:

Գ. Խաչատրյանի կատարածը, իրոք, խոշոր ծառայություն է մեր հին մատենագրության արժեքավոր երկերը ժամանակակից ընթերցողի սեփականությունը դարձնելու շահագնաց կարևոր դրոծում:

Մինչ այս թարգմանությունը անցյալում առանձին փորձեր ևղել են (նույն լեզվով), և նույնիսկ որոշ հատվածներ տպագրվել են¹: Սակայն Գ. Խաչատրյանի թարգմանությունն առաջին ամբողջականն է և, բացի դրանից, աչքի է ընկնում իր որակով:

Թարգմանիչը, քաջ ափսոսանքով դրաբարին, լինելով հայ հին գրականության գիտակ, հմտորեն ծանոթ լինելով նյութի հետ անմիջականորեն առնչվող փիլիսոփայական, կրոնական

¹ Հայտնի է, օրինակ, Մ. Տետեյանի թարգմանությունը Տե՛ս օձոյս» (Կ. Պոլիս), 1906 թ., № 21, 26, 28, 32, 33, 37, 39:

շատ ուսմունքների, կրոնների և այլն, կարողացել է խորամուխ լինել ռեզո աղանդոցի քոն էություն մեջ և տալ ընդունելի թարգմանություն: Գ. Խաչատրյանը պատվով է կատարել իր ձեռնարկած դժվարին գործը: Նա բազմաթիվ դժվարություններ է հաղթահարել՝ սկսած բնագրային շատ վեճեր հարուցած երեսյանների մեջ կողմնորոշվելուց, վերջս-ցրած բառերի ու տերմինների իմաստային նուրբ տարբերակումներով, վերատարգման համար ճիշտ համարժեքների ընտրությամբ և այլն:

Թարգմանությունը հրատարակվել է 1951 թ., Բուենոս-Այրեսում՝ զրաբար զուգահեռ բնագրով, և նվիրված է Վարդանանց դուցազնամարտի 1500-ամյակին:

Գ. Խաչատրյանն իր թարգմանության համար հիմք է ընդունել վենետիկյան հրատարակությունը: Նա բնագրային որոշ միջամտություններ է արել՝ նախ՝ առաջին և երկրորդ գրքերի գլուխները (ոչ բոլորը) օժտել է վերնագրերով՝ բխցնելով բովանդակությունից, ըստ վենետիկյան բաժանման՝ առաջին գրքի Ա գլխի սկզբնամասն անշատել է որպես նախաբան. երրորդ և չորրորդ գրքերի գլուխները չի վերնագրել. շատ դեպքերում գլուխների ներսում մտքերի զանազանությունն ընդգծելու նպատակով հատվածներն առանձնացրել է: Ապա՝ մասնակի դեպքերում, կամ ըստ եղած առաջարկների, կամ սեփական նախաձեռնությամբ բնագրային փոքրիկ շտկումներ է կատարել, տեղ-տեղ տողատակում նշել տարբերությունները, առաջարկները և այլն: Իհարկե, սրանք արված են բնագրի ճիշտ ընկալմանը նպաստելու նկատառումով: Չձեռնարկելով նույն գրքում զետեղված գրաբար բնագրի քննությունը՝ միայն ասենք, որ այնտեղ կան տպագրական բովանդակային վրիպակներ, բառերի, բառակապակցությունների, նախադասությունների բացթողումներ և այլն: Այստեղ մեր դիտողությունները, ինչպես նշեցինք, վերաբերելու են միմիայն աշխարհաբար թարգմանությանը:

Անցնելով գիտողություններին՝ դրանք կարող ենք բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ նկատի ունենք թարգմանական բացթողումները, երկրորդի մեջ՝ անճիշտ վերարտադրությունները:

Թարգմանական բացթողումները մեծ մասամբ անուղղորդության արդյունք են, կամ էլ թերևս դրանց մեջ կան և այնպիսիները, որոնք սպրդել են տպագրության ընթացքում: Սակայն ինչ էլ որ լինեն դրանք, այս կամ այն չափով ազդում են երկրի բովանդակության ամբողջական ու ոչ պակասալոր ներկայացման, հետևաբար և յուրացման վրա:

Թարգմանական բացթողումները տարբեր չափերի են՝ մեկ բառից մինչև ամբողջ նախադասություններ և նույնիսկ պարբերություններ:

4-րդ էջում չկա՝ օդ, առանց ցողոյ խոնաութեան և ջերմութեան՝ վնասակար և ապականիչ է՝ նախադասության (վենետիկյան հրատ., էջ 10) թարգմանությունը (օմլ օդը, առանց ցողի խոնավության ու (արեգակի) ջերմության, վնասակար և ապականիչ է), Ի դեպ, այդ նախադասությունը թյուրիմացաբար բաց է թողնված նաև գրաբար մասում: Պատճառը, թերևս, դրա և նախորդ նախադասության վերջնամասերի նույնականությունն է:

7-րդ էջում թարգմանության մեջ արտահայտություն չի գտել բնագրի «անարգանաց» բառաձևը: Բնագրում գրված է՝ «...առ ի խնդրելայ զվրէժ անարգանաց ասարակաց արարչին» (վենետիկյան հրատ., էջ 16): Թարգմանված է՝ «հասարակաց արարչին վրէժը լուծելու համար»: Իհարկե, վրեժը վերջիվերջ վերաբերում է արարչին, սակայն, ըստ բնագրի, դա նրա անարգանքի վրեժն է: Ըստ Եզնիկի՝ հիշատակված արարածներից յուրաքանչյուրը կարող է վրեժ լուծել ընդհանուրի արարչի անարգանքի համար:

27-րդ էջում բաց է թողնված «... և առաքիցէ զնոսա ի հրահանգս մրցել ընդ ախոյանսն...» նախադասության թարգմանությունը (վենետ. հրատ., էջ 57): Դա բոլորովին էլ ավելորդ չէ և իր որոշակի տեղն ունի շարադրանքի մեջ: Եզնիկը, բերելով մարտոտույցի օրինակը, նշել է, որ նա Վերանց (այսինքն՝ իր աշակերտներին) ուղարկում է մրցասպարեզ՝ հակառակորդների հետ կռվելու...:

Բնագրի «...աստուածական գիրք և արարածոց բնութիւնք անդադար վկային դարութենէ մեռելոց» մասից (էջ 35, վենետ. հրատ., էջ 73) անտեսվել է «արարածոց բնութիւնք» արտահայտությունը: Այսպես՝ «աստվածային գիրքերը անդադար կը վկայեն մեռելներու յարութեան մասին»: Բայց, ինչպես տեսնում ենք, Եզնիկը չի բավարարվել միայն մատնացույց անելով Աստվածաշունչը («աստուածական գիրք»), այլ նշել է նաև արարածների բնութի, բուն էության մասին («արարածոց բնութիւնք»), այսինքն թե՛ մեռածների հարության մասին անդադար վկայում են աստվածային գրքերը (Աստվածաշունչը) և արարածների բնութի, Եզնիկը կարծում է, թե արարածներն իրենց բնությամբ ցույց են տալիս, որ մեռածները հարություն են առնում:

2-ի թարգմանված ...Ոչ կամէր թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին...» նախադասութեան «ի հարկէ» բառաձեւը (լէ 37, վննետ. հրատ., էջ 76), որով չի ընդգծվել Եզնիկի նշած հակադրությունը՝ նա խոսում է ազատականության մասին և դրան հակադրում է անասունների դրությունը։ Ըստ նրան՝ անասունները հարկադրանքով են ղեկավարվում, ճնշման տակ էն ապրում՝ «ի հարկէ վարիցին»։ Իսկ Գ. Խաչատրյանը գրել է՝ «չէր ուզեր որ անասուններու պէս կենաւ վարկին անոնք»։ Ուստի կարեւորը հեղինակային մտքի ներքին շփոթումն արտահայտումն է (ասում ենք՝ ճիշտ, ոչ անպայման ճշմարիտ)։ Բանն այն է, որ այդ ներքին շփոթումը դրսևորվում է «ի հարկէ» բառաձեւով։ «Անասունների պէս կյանք վարել»-ը դեռ դա չի յալիս։ Խոսքը, ինչպես ասացինք, անասունների պէս ի ետեւէն = հարկադրաբար վարվելու, ճնշման տակ (հակառակը՝ ազատակամ) ապրելու մասին է։

Նույն կոտմ անտեսված է բնագրի «յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան, և ապա» մասը (վննետ. հրատ., էջ 77)։ Եզնիկը գրել է՝ «Ձի եթէ բռնաւոր որ ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան, և ապա միւր ի փորձութիւնսն»։ Այսինքն՝ «Որովհետեւ եթէ նա զորավոր մեկը լինէր, առանց օգնություն չէր խնդրի ու ստանա և հետո միայն ձեռնամուխ լինէր փորձելու»։ Ահա Գ. Խաչատրյանի թարգմանածը՝ «Ձի եթէ բռնաւոր մէկն եղած ըլլար՝ չէր մօտենար փորձելու»։ Պարզ է, որ հեղինակի համապատասխան միտքը լրիվ չի արտահայտվել այստեղ։

«...Ասաց Տէր ի սուրբ աւետարանսն...» նախադասությունից (էջ 39, վննետ. հրատ., էջ 81) չի թարգմանված «ի սուրբ աւետարանսն» արտահայտությունը։

Իսկ 41-րդ լէի դրաբար բնագրային բաժնում բաց թողնված «Ոչ եթէ մի ինչ ազգ իցէ դիւանք՝ որ պահօք և ազօթիք ելանիցէ» մասը (վննետ. հրատ., էջ 85) թարգմանության մեջ գտնել է համապատասխան արտահայտություն, սակայն այստեղ էլ անտեսվել է նրա անմիջական շարունակությունը կազմող «և այլքն ոչ» արտահայտությունը։ Դա, կարծում ենք, ոճական նկատառումներով չի արված։ Այդ բացթողնված միտքը տուժել է Այդպիսով թարգմանության մեջ արտացոլում չի գտել հեղինակի համապատասխան մոտեցումը։

Հայտնի է, որ Եզնիկի երկի տպագրի օրինակներում դուրս է մնացել ձեռագրի «Որպէս մարդարէն ասէ, թէ ամենայն մարմին խոտ է» նախադասությունը (ըստ վննետ. հրատ. առաջին դիրք, ԻԳ, էջ 91)։ Սակայն ձեռագրի վերագրումների հետո Հ. Աճառյանը և Գ. Տեր-Մկրտչյանը դա ներկայացրել են ձեռագրական տարբերությունների մեջ, Եվ ճիշտ են վարվել այն բանասերները (Վ. Առաքելյան, Լ. Մարիսյան), որոնք հետագայում դա ներառել են բնագրի մեջ, Գ. Խաչատրյանը հիշյալ նախադասությունը չի մտցրել բնագրի մեջ և չի էլ թարգմանել (էջ 44)։ Նա թերևս այդպես է վարվել նշելով վննետիկյան վերջին՝ 1926 թ. տպագրությունից, որտեղ այդ վերականգնումը կատարված չէ (էջ 101)։ Նախադասությունը, քանի որ զալիս է ձեռագրից, պետք է վերականգնել և թարգմանության մեջ ևս համապատասխան տեղ տալ նրան։ Վերականգնումից հետո բնագրի համապատասխան մասն այսպիսի տեսք է ընդունում՝ «Եւ արդ ո՛ր իշխցեն շնչել, որք ասեն՝ թէ հրեշտակք ընդ կանայս ամուսնացան. զի նորա հրեշտակք կոչին, և մարդիկ խոտեղինք, որպէս մարգարէն ասէ՝ թէ ամենայն մարմին խոտ է»։ Այսինքն թե՛ «Արդ ո՛ր են համարձակվում շնչել նրանք, որոնք ասում են, թե հրեշտակները կանանց հետ ամուսնացան. չէ՞ որ նրանք հրեշտակ են կոչվում, իսկ մարդիկ՝ խոտեղեն. ինչպէս որ մարգարէն է ասում՝ «Ամեն մի մարմին խոտ է»։

Բնագրի «Ձի չիբ ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս շոկս, զհրեշտակաց, զգիւաց և զմարդկան, յամենայն աստուածատուր գրոց և ի բնութենէ արարածոց յայտնի է» հատվածը (վննետ. հրատ., էջ 97) թարգմանված է՝ «Վասնզի ամբողջ աստուածատուր գիրքերէն և արարածներու բնութենէն յայտնի է, թէ այս երեք խումբերէն դուրս ուրիշ բանաւոր արարածներ չկան» (էջ 47)։ Ինչպես տեսնում ենք, բաց է թողնված «զհրեշտակաց, զգիւաց և զմարդկան» մասը։ Թարգմանելը թերևս նկատի է ունեցել այն, որ բնագրի նախորդող տողերում նշվում է հրեշտակների, դեերի և մարդկանց մասին։ Սակայն շարունակության մեջ հեղինակը իր միտքն ավելի հստակ արտահայտելու համար չի բավարարվել սոսկ «երեք դասի» հիշատակումով, այլ այնպես է գրել, որ հենց նույն տեղում պարզորոշ հասկացվի, թե խոսքը վերաբերում է հրեշտակների, գեերի և մարդկանց խմբերին, այսինքն՝ ըստ Եզնիկի՝ բանական արարած-

2 Տե՛ս «Քննություն և համեմատություն Եզնիկյան նորագիտ ձեռագրին», Վիեննա, 1904, էջ 36։

3 Հմմտ. Վ. Առաքելյան, Գրաբարի հատընտիր, Երևան, 1946, էջ 66, Եզնիկի երկի փաթեղյան վերջին (1959 թ.) հրատարակությունը, էջ 43։

4 Եզնիկն այստեղ մեջբերում է կատարել Նույն., Խ, 6-ից։

ները երեք դաս են կազմում, որոնց մեջ մտնում են հրեշտակները, դևերը և մարդիկ, իսկ դրանցից դուրս ուրիշ բանական էակներ չկան:

Առաջին դրբի ին զվի վերջին պարբերությունից թարգմանության մեջ տեղ չեն գտել «երէնոյ» («զհետ երէնոյ») և «ծածուկ» («ծածուկ զօրութեամբ») բառերը (էջ 59, վեներտ. հրատ., էջ 107): Եզնիկը, անցնելով զրադաշտական կրոնի քննադատությանը, երկու շար և բարի աստվածների՝ մեկ արգանդում սաղմնավորված լինելուն վերաբերող գրույթը հերքելու նպատակով գրել է՝ «Զի ոչ երբէք ի միոյն աղբերէ երկու բոխմունք ելանեն, մինն քաղցր և միւսն դառն. և ոչ ի միոյն ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան» (վեներտ. հրատ., էջ 120): Դրա դիմաց թարգմանության մեջ կարգում ենք՝ «Վասնզի մէկ աղբիւրէ երկու տեսակ ջուր չի բխիր երբէք, մէկը քաղցր և միւսը դառն» (էջ 59): Հավանաբար որոշ արտահայտությունների իմաստային նմանության պատճառով թյուրիմացաբար թարգմանությունից դուրս է մնացել շարունակությունը՝ «և ոչ ի միոյն ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան», այսինքն՝ «ոչ էլ մեկ ծառից երկու տեսակ պտուղներ (են լինում)՝ մեկն անուշ, մյուսը՝ դառն»:

Թարգմանության մեջ ավելի ջատ է տուժել հետևյալ հատվածը՝ «Եւ պարտ է խնդրել յումմէ՝ նայն եղև, և ո՛վ էր՝ ում ինքն զյաշտն առնէր. և ո՛վ այն՝ որում որդւոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնելու Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն. և Աստուած միայն կարօղ իցէ առնել յոչնէլ ինչ որպէս և կամի» (վեներտ. հրատ., էջ 130—131): Դա Գ. Խաչատրյանի թարգմանությամբ ստացվել է այսպես՝ «Եւ պէտք է փնտռել, թէ ո՞րմէ նա ստեղծեցաւ, և ո՞վ էր այն՝ որուն կը զոհէր: Աստուած միայն կարող է ստեղծել ոչինչէլ ինչ մը՝ ինչպէս որ ուզէ» (էջ 64): Այսպիսով թարգմանվել են հատվածի սկիզբն ու վերջը, իսկ միջին մասը դուրս է մնացել: Զթարգմանված մասն է՝ «և ո՛վ այն՝ որում որդւոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնելու Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն»: Ակներև է, որ բացթողումն արդարացում չունի: Պետք է լրացնել և ընթերցողին հասցնել համապատասխան մտքերը: Մատնացույց արված ամբողջ հատվածի բովանդակությունը թարգմանաբար այս է՝ «Եւ պէտք է որոնել, թե ինքն ումի՞ց ստեղծվեց, ո՛վ կար, որին ինքը զոհ էր մատուցում, և ո՛վ էր նա, որին, իր համար, իր որդուն հրամայեց զոհ մատուցել: Որովհետև հնա-րավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի (=ստեղծվի)՝ առանց ուրիշից զոյացում ստանալու. և միայն աստված կարող է ոչնչից բան ստեղծել, ինչպես որ կամենա»:

Բնագրում ասված է՝ «Զի Որմիզդ, ասեն, որ ինչ բարի էր՝ զայն առնէր, և արս արգարս և բարեգործս, և Արհմեն զլար արարածս և զդևս» (վեներտ. հրատ., էջ 138): Թարգմանությունն ասում է՝ «Զի յՈրմիզդ, — կ'ըսեն, — ինչ որ բարի էր՝ զայն կ'ստեղծէր, և Արհմեն՝ շար արարածներն ու դևերը» (էջ 68): Թերևս թարգմանիչը նկատի է առել, որ բնագրի «որ ինչ բարի էր» արտահայտությունը, ընդհանուր լինելով, իր մեջ ընդգրկում է նաև շարունակության մեջ նշվող համապատասխան հասկացությունները ևս («և արս արգարս և բարեգործս»), ուստի և միայն վերոհիշյալի թարգմանությամբ բավարարվել է. սակայն փաստ է, որ դուրս է մնացել «և արս արգարս և բարեգործս» արտահայտությունը: Եզնիկը ցանկացել է լրիվ մեջ բերել զբովանդականների համապատասխան խոսքը, որտեղ հատկապես նշվում է, որ, իբր, Որմիզդը ստեղծել է այն, ինչ որ բարի է, այդ թվում նաև արգարս ու բարեգործ մարդկանց:

71-րդ էջում թարգմանության մեջ անտեսված է «գեղեցիկ» բառը՝ «...և զամենայն ինչ՝ որ բարի և գեղեցիկ է՝ արար» նախադասությունից (վեներտ. հրատ., էջ 145):

72-րդ էջում «եւ եթէ գազանք վասն վնասակարութեանն ի շարէ ումեքէ արարչէ կարծիցին, զմարդիկ առաւել արժան է ի շարէ արարչէ իմանալ, և ոչ զնոսա» նախադասությունից (վեներտ. հրատ., էջ 146) չի թարգմանված «և ոչ զնոսա» արտահայտությունը: Դա բնագրում ավելորդ չէ: Ընդհակառակն, դրանով հեղինակը տվյալ դեպքում ընդգծել է իր միտքը: Այսինքն՝ եթե զազանները վնասակարության պատճառով են շար աստծուց կարծվում, ապա այդ դեպքում մարդկանց առավել ևս պետք է շար աստծու արարածներ համարել, քան նրանց (որովհետև, ըստ նրան, մարդիկ ավելի շատ վնասակար գործեր են կատարում):

«Եթէ կարծիք յանցանաց էին դևք, ոչ երբէք զմարդիկ ի կուպաշտութիւն յօժարեցուցանէին...» նախադասությունից (վեներտ. հրատ., էջ 150) թարգմանության մեջ արտացոլում չի գտել «ի կուպաշտութիւն» արտահայտությունը (էջ 74), մինչդեռ դա բնագրում արտահայտված մտքի համար խիստ էական նշանակություն ունի:

Բնագրում կա այսպիսի հատված՝ «Եւ են հարկաւոր բնակաւորք հրամանաւ արարչին իւրեանց, ի վայելս ամենայն կենդանեաց. և իւրեանց ինքեանք չեն, քանզի ոչ դիտեն՝ թէ իցեն և թէ չիցեն: Որպէս և երկինք և երկիր և ջուրք և փայտք և քարինք են վասն որոց եղեն, և իւրեանց ինքեանք չեն. քանզի ոչ գիտեն՝ եթէ իցեն և թէ չիցեն, այնու զի չեն մտաւորք և

քանադոր: (վենետ. հրատ., էջ 153): Դա թարգմանված է հետևյալ ձևով՝ «Եւ անոնք մնալուն Կառառնէր են, իրենց արարչին հրամանով Դո՛ր կենդանիներուն վայելման համար. և իրենք իրենցմէլ չէ ու կ'ընեն այդ բանը. վասնզի չեն գիտեր թէ կան կամ չկան, քանի որ մտաւոր եւ բանաւոր չեն» (էջ 75): Իսկ դա ամբողջ հատվածի լրիվ համարժեքը չէ: Թարգմանության մեջ արտադրում չի գտել «Որպէս եւ երկինք և երկիր և ջուրը և փայտը և քարինք են վասն որոց եղևնէ. և իրեանց ինքեանք չեն. քանզի ոչ գիտեն» եթէ իցեն և թէ չիցեն» մասը: Դրա պատճառով հավանաբար այն է, որ ընթարգմանված կտորի վերջնամասը համընկնում է նրա սկզբնամասին նախորդող արտահայտություններին, որոնք թարգմանության մեջ շեմիջապես միացվել են հատվածի վերջին նախադասությանը, և այդպիսով միջին մասը դուրս է մնացել: Թյուրմասցաբար դուրս մնացածի թարգմանությունը կլինի այսպես՝ «Այդպես էլ երկինքը, երկիրը, ջրերը, փայտերը և քարերը նրանց համար են, որոնց համար որ ստեղծված են, իրենք իրենց համար չեն, որովհետեւ չգիտեն» դուրսն ունեն, թե ոչ...»:

Այս ձևով էլ նման արտահայտությունների խառնումով բացթողում կա նաև հետևյալ հատվածի թարգմանության մեջ՝ «Եւ այսու ամենայնիւ և այլովք քաղածք յայտ է՝ եթէ ոչ նա անօթս բարկութեան կազմէ ի կորուստ, և ոչ անօթս ողորմութեան ի փառս, ալ ինքեանք զանձինս կամ ի կորուստ կամ ի փառս» (վենետ. հրատ., էջ 165—169), որը այսպես է ներկայացվել Սարգմանության մեջ՝ «Այս բոլորով և ուրիշ շատ բաներով յայտնի է, թէ նա չէ որ կը կազմէ բարկութեան անօթ՝ փառքի համար. այլ իրենք զիրենք՝ կամ կորուստի կամ փառքի համար» (էջ 93): Թարգմանությունից երևում է, որ «ոչ նա անօթս բարկութեան կազմէ ի կորուստ, և ոչ անօթս ողորմութեան ի փառս» նախադասությունից բաց է թողնվել «ի կորուստ, և ոչ անօթս ողորմութեան» մասը: Իսկ հիշյալ նախադասությամբ այն միտքն է արտահայտված, թե «նա չէ, որ (մարդկանց) բարկության անոթներն էլ պարտաւորում կորուստի համար, ոչ էլ ողորմության անոթները՝ փառքի համար...»:

93-րդ էջում թարգմանության մեջ անտեսվել է «Այլ, ասեն, մեք իսկ աշօք տեսնեմք, զի ի ծովէ կլանէ» նախադասությունը (վենետ. հրատ., էջ 190): Այնինչ քնադրի շարունակության մեջ Նվերիկն իր հակահաստատությունն ուղղում է հենց այդ մտքի դեմ: Պարզ է, որ նրա քաղակալությունից տուժում է երկի բովանդակությունը: «Բայց,— ասում են,— հենց մենք մեր աչքով տեսնում ենք, որ (արևը) ծովից է ելնում»,— այս է հիշյալ նախադասության միտքը:

Նույն գլխի նախավերջին պարբերության «զտամկութիւն» բառաձևը (վենետ. հրատ., էջ 191) թարգմանության մեջ արտացոլում չի գտել (էջ 93—94):

Քնադրում դրված է՝ «Եւ լուսին, ասեն, ի ներքոյ է, քան զարեղակն և քան զամենայն աստեղս, և քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեղական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեղակն» (վենետ. հրատ., էջ 201): Թարգմանված է՝ «Եւ լուսինք — կ'ըսեն — արեղակն և բոլոր միւս աստղերն վար է, և երբ ճիշտ արեղակին դէմ գայ՝ արեղակը կը խաւարի» (էջ 100): Անտեսված է «և քանզի ի ներքոյ է» նախադասությունը, որը, իհարկեւ, ավելորդ չէ: Դրանով ավելի է քնդվում ու հիմնավորվում արեղակի խավարման պատճառը:

Միտքը տուժել է նաև հենց նույն գլխի վերջին նախադասության «աստուած» բառաձևի բացթողումով: «Բնադիրն ունի» «Ձայս ամենայն ասեն հայթայթանօք, զի դերկինս և զլուսաւորսն կենդանիս և աստուածս կարծեցուցեն» (վենետ. հրատ., էջ 201): Թարգմանության մեջ կարդում ենք՝ «Եւ շանան ըսել այս բոլորը, որպէսզի կարծել տան, թէ երկինքն ու լուսաւորները կենդանիներ են» (էջ 100): Մինչդեռ հայտնի է, որ Նվերիկի հիմնական խնդիրներին մեկնել է հղել է քննադատել հույն իմաստասերների պանթեիզմը՝ բնության աստվածացումը: Դա երևում է նաև բնագրի հիշյալ նախադասության մեջ: Նա ընդգծել է, որ այդ իմաստասերները ճիշդ ու յոթն են զործադրում, որպէսզի կարծել տան, թե երկինքը, երկնային լուսատուները կենդանիներ և աստվածներ են: Ահա թե ինչու՝ նշեցինք, որ թարգմանության մեջ «աստուած» բառաձևի բացթողումով միտքը տուժել է:

Նվերիկի փիլիսոփայական հայացքների ճիշտ ըմբռնման ու քննադատության մեջ նրա կողմնորոշումը լավ պատկերացնելու տեսակետից միտքը խիստ պակասավոր է ստացվել թարգմանության մեջ «և զայնարհս նմա մշտնջենաւորակից զենել» արտահայտության անտեսումով: Բնագրում ասված է՝ «Արդ ի խնդրելն փիլիսոփայից զԱստուած ի բնական օրինաց՝ որ ի միտսն անկանելի է, որպէս յառաջագոյնն ասացար, զովովևէն արժանի է. բայց ի քաղում աստուածսն անկանելի, և զաշխարհս նմա մշտնջենաւորակից զենել, անհնարին ամպարշտութիւն է» (վենետ. հրատ., էջ 208): Թարգմանության մեջ ասվում է՝ «Արդ, զովովևէն արժանի են փիլիսոփաները, երբ բնական օրէնքներու խնամտութեամբ կը փնտռեն զԱստուած, ինչպէս առաջ ըսինք. բայց բազմաթիւ աստուածներու յարիւր՝ շարաշար ամպարշտութիւն է» (էջ 103): Բանն այն է, որ

Եղեիկը հույն իմաստասերների հայացքները քննադատելիս «անհնարին ամպարշտութիւն» է համարում ոչ միայն այն, որ նրանք մեկ աստված ընդունելուց բացի ընդունում են նաև ուրիշ շատ աստվածներ՝ հարելով բազմաստվածականությանը, այլև աշխարհը աստծուն մուտագոյակից են համարում. այսինքն կարծում են, թե աստծու հետ մշտնջենավորապես գոյություն է ունեցել աշխարհը:

Եղեիկի դավանած փիլիսոփայությունն ընդունում է միայն մեկ նախասկիզբ՝ աստված, որը, իբր, նախորդել է բնությանը, վերջինս նրա արարչազորման արդյունքն է. արարած է: Պարզ է, որ այս հիմնադրույթից ելնելով՝ Եղեիկը չէր կարող հանդուրժել որևէ տարբեր հայացք: Նրա համար մերժելի է իր ընդունած մեկ սկզբնապատճառի հետ աշխարհի ճանաչումն իբրև նրան համագոյակից:

Այսպիսով՝ վերը բերված հատվածում Եղեիկն իր քննադատությունն ուղղում է ոչ միայն բազմաստվածականության (պոլիթեիզմի), այլև երկարմատականության (դուալիզմի) դեմ: Մինչդեռ տվյալ հատվածի թարգմանության մեջ երևում է առաջինը, բայց վերջինը (վերարերմոսքը երկարմատականության նկատմամբ) չկա:

Քննարկի «Եւ ընկզմեցաւ անունն աստուծոյ, որ տեառնն արարածոց, ի մէջ անուանց բազում աստուածոց, և ոչ ուրեք գտանէր» նախադասության դիմաց (վենետ. հրատ., էջ 246) թարգմանությունն ունի՝ «Եւ աստուածներու անուններուն մէջ, և ան ոչ մէկ տեղ կը գտնուէր» (էջ 123): Պարզ նկատելի է, որ բառեր են պակասում: Բերված նախադասությամբ ասվում է՝ «Եվ արարածների տեք աստծու անունն ընկզմվեց բազմաթիվ աստվածների անունների մէջ ու ոչ մի տեղ չէր երևում»:

Եղեիկը, զուգահեռելով հեթանոսների և մարկիոնականների հայացքները, գրել է՝ «Դարձեալ և ետք ծնունդս աստուածոց բազմաց ասեն, և սոքա յամուսնութենէ օրինացն աստուծոյ և հիւզեալ ասեն արարեալ զամենայն արարածս. և զի՞նչ աւելի իցեն քան զմոզս, որք յասուանութենէ դենն զաստուածսն իւրեանց» (վենետ. հրատ., էջ 252): Մինչ այդ էլ նա «ետքա» և «սոքա» հանդիպադրվող ենթականերով զուգահեռում է բազմաստվածականների ու մարկիոնականների կրոնական ըմբռնումները: Սակայն թարգմանության մեջ մեր մատնանշած հատվածի սկզբնամասում «ետքա»-ի և «սոքա»-ի հանդիպադրման անտեսումով չի երևում այդ զուգահեռը. և այդտեղ նշված հասկացությունները սխալ կերպով վերագրվում են միմիայն մարկիոնականներին (կրկին հիշեցնում ենք՝ խոսքը բերված հատվածի սկզբնամասին է վերաբերում): Ահա Գ. Խաչատրյանի թարգմանությունը՝ «Դարձեալ, երբ, անոնք (մարկիոնականները) բազմաթիւ աստուածներու ծնունդի մասին կը խօսին, եւ օրէնքի աստուծոյ եւ հիւլէի ամուսնութենէն ստեղծուած կը նկատեն բոլոր արարածները, ալ ինչո՞ւ կը տարբերին մոգերէն՝ որոնք ամուսնութեան արդիւնք կը համարեն իրենց աստուածները» (էջ 126): Միտքը ճիշտ չի վերարտադրել:

Բերված հատվածը համեմատելով քննարկի նախորդ հատվածների հետ՝ չի կարելի չնկատել, որ Եղեիկը «ետքա»-ի տակ նկատի ունի հեթանոսներին, «սոքա»-ի տակ՝ մարկիոնականներին, իսկ այս հատվածի թարգմանության մեջ, ինչպես ասացինք, այդ ենթակաները համատեղված են: Եղեիկն այդ հատվածում իրականում ասել է հետևյալը՝ «Դարձեալ» և նրանք (հեթանոսներն) են ընդունում բազմաթիվ աստվածների ծնունդներ, և սրանք (մարկիոնականներն) են ասում, թե օրենքի աստծու ու հյուլէի ամուսնությունից են ստեղծվել բոլոր արարածները. ուստի ինչո՞ւ են ավելի մոգերից, որոնք իրենց աստվածներին ամուսնությունից (առաջացած) են համարում»:

Չորրորդ գրքի Ե զլխից չի թարգմանված մի ամբողջ պարբերություն: Ահա այդ պարբերությունը՝ «Եւ ո՞ւր էր զի երկոքին ուրախ լինէին ի նմա՝ որ հակառակ միմեանց տային զպատուէրս. մինն զբարեաց իբրև զբարի, և մինն զչարեաց իբրև զչար: Զի ոչ արդարոյ, որ բնութեամբ արդար իցէ, մարթի զչար ինչ պատուէր տալ. և ոչ չարի, որ բնութեամբ չար իցէ, զբարւոյ խրատ տալ» (վենետ. հրատ., էջ 256—257):

Այս պարբերությունը կա և՛ ձեռագրում, և՛ տպագիր օրինակներում: Դա առկա է նաև Գ. Խաչատրյանի հրատարակած գրաբար մասում՝ միայն մի վրիպակով՝ «բարի, որ բնութեամբ չար իցէ», փոխ. «չարի, որ բնութեամբ չար իցէ» (տե՛ս անդ, էջ 128): Ակներև է, որ թարգմանությունը բաց է թողնվել թյուրիմացաբար: Այդ պարբերությունն արևելահայ աշխարհաբարով կլինի այսպես՝ «Եւ չարի և կլինեի, որ երկուսն էլ ուրախանային նրանով, երբ միմյանց հակառակ հանձնարարություններ էին տալիս՝ մեկը բարիքների համար, որպես բարի, մյուսը չարիքների համար, որպես չար: Որովհետև նա, որ էություն արդար է, չի կարող որևէ չար հանձնարարություն տալ, չարն էլ, որ էությամբ է չար, բարու համար խորհուրդ տալ»:

Բարդաճանկան Բարդաճանկան կան նույն գրքի է դիտի ներառել չափազանց՝ Եւ զայն ոչ դիտել, քի յն եւս յայտ է թէ մինչեւ ցերեորդ երկինս ասիցէ, կամ թէ մինչեւ ցերեորդ ինչ մասն ի Բարդաճանկան միտլ երկինս ասիցէ. զի Բանն ի յոյն լեզու յերկոսին չարկանէ: Եւ մասնաւոր շահանք արթնրն ասլ, որ է ն. զի ոչ ասէ թէ մինչեւ ցերեորդ երկինն, այլ թէ ցերեորդ երկին շահանքն ասլու: (վենետ. հրատ., էջ 261): Բարդաճանկանը ներկայացվել է այսպես՝ նույն զիտեր, թէ յայտնի չէ զեռ, որ մինչև երեքորդ երկինը ըսել կուզէ, թէ մինչև երեքորդ մէկ մասը մէկ երկնքի Բարդաճանկան մասերէն, վասնզի չըսեր՝ մինչև երեքորդ երկինը, այլ առանց յոյր մինչև երեքորդ երկինն (էջ 130): Սա լրիւ չի վերաբերողում չափազանց բովանդակութեամբ: Այսինքն ինչ է ասված այնտեղ՝ Եւ չիտեմ, որ զեռ պարզ չէ՝ մինչև երեքորդ երկինը: Եւ ուղիւ ասել, թէ՝ մինչև մէկ երկնքի Բարդաճանկան մասերից ինչ-որ երեքորդ մասը, որովհետեւ հունարէն լեզուով այն խոսքը երկուսին էլ կարող է վերաբերել: Իսկ մասնավոր որ ասում է առանց ուղի, որ ն-ն է, ոչ թէ մինչև երեքորդ երկինը է ասում, այլ՝ մինչև երեքորդ երկինը: Եւ առանց ն-ն տեղի: Այստեղ կան նաև բացատրության ննթակա այլ կետեր:

Նույն դիտի նախալեզին պարբերության «...այլ թէ և Պետրոս՝ որ զլուսն է առաքելոց՝ տեսանիցի, յկտրի ճառել. և թէ լսիցի, յկարլ պատմել» նախադասութեանց թարգմանության մեջ տեսնուած է «և թէ լսիցի, յկարլ պատմել» մասը (էջ 131, վենետ. հրատ., էջ 263):

Սրանք են մեր նկատած թարգմանական բացթողումները:

Այսինքն անշտութեան երկուսին մասին: Այստեղ էլ նկատի ունենք այն, ինչ թարգմանական սխալ ենք համարում՝ շահանքաւորութեան շահանքութեան մեջ վիճարանութեան առարկա դարձած բնագործին մեկնարանութեան երկինը:

Ինչպես հայտնի է, Նշանակալից, ինչու ժամանակական (մոնիստ) և միաստվածական (մոնոթեիստ), այդ տեսակետից սուր պայքար է մղում երկարամտական (դուալիստական) աշխարհայացքի և Բարդաճանկանութեան (պոլիթեիզմի) դեմ: Այդ մոտեցմամբ էլ նա դրել է՝ «Եւ թէ որպէս վկայեն» մի է պատճառ ամենեցուն, և նույն էական և մշտնջենաւոր, յայտ է թէ յայն ոչ էականք են և ոչ մշտնջենաւորք. և զիա՞րդ չէականք և չմշտնջենաւորք ընդ էականին և ընդ մշտնջենաւորին երկրպագութիւն անուցուն» (վենետ. հրատ., էջ 12—13): Դա թարգմանված է՝ «Եւ թէ, ինչպէս անոնք կը վկայեն, մէկ է պատճառն ամէն բանի, և նոյնը ինքնագոյ է և մշտնջենաւոր», — յայտնի է, թէ միասնորդ ոչ ինքնագոյ են և ոչ ալ մշտնջենաւոր: Եւ ինչու ինքնագոյ և մշտնջենաւոր չեղողները երկրպագութիւն ընդունին ինքնագոյին եւ մշտնջենաւորին տեղ» (էջ 6): Առարկայական ննթակա է վերջին՝ «տեղ» բառը: Դա առաջ է բերում ըմբռնման սկզբունքային տարբերություն: Բարդաճանկանութեան ու առարկայականները մեկ մշտնջենաւոր աստծու հետ ընդունում և պաշտում են նաև այլ աստվածներ: Պարզ է, որ այս դեպքում հաստատված է թարգմանության մեկ «տեղ» բառի փոխարեն պիտի լինէր «հետ»: Բնագործը ընդդէմ չափազանց է տրականի հետ՝ միասնութեան նշանակութեամբ և ոչ թէ սեռականի հետ՝ փոխութեան իմաստով: Ինչ և ըստ ձեռն յայտելի դա չենք կարող ապացուցել, սակայն ըստ երկի ընդհանուր բովանդակության հաստատվում է:

Այստեղ չորս երկվարներով լծված կարգի տարկերով ներկայացնելիս Նշանակալից գրել է՝ «Ամենայն կարգ ի համազգեաց երկվարաց լծին. բայց միայն (1) այս կարգ» որ ի համազգեաց լծեալ են. և որ ի համազգեաց լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձտեն և ի տաղանայի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն իսկ կառացն գործեն...» (էջ 17—18): Ի. Խաչատրյանը թարգմանել է՝ «Ամէն կարգ համազգի երկվարներէ լծուած է, բայց ի այս կարգին՝ որ լծուած է անմասնելու: Անոնք որ համազգիներէ են լծուած՝ երբեմն կը սայթաքին, երբեմն անսանձ կը վազեն և կառավարն ու իրենց անձերը վտանգի մէջ կը դնեն. և երբեմն կարող են իսկ կը խորտակեն» (էջ 8): Միտքն ընդհանրապէս ճիշտ է հասկացվել, սակայն ձևակերպման մեջ անճշտություն կա: «Անոնք որ համազգիներէ են լծուած՝ երբեմն կը սայթաքին...» ձևակերպումը բնագործին հիմք ունի Նշանակալից թէ որ ի համազգեաց լծեալ են նախադասութեամբ նկատի ունի սովորական կարգերը, իսկ շարունակության մեջ թվարկում է ոչ թէ կարող են, այլ երկվարների գործողությունները: Թարգմանության մեջ էլ այդպէս է ստացվել: Ուրեմն փոխադրում կարելի էր ավելացնել մի այնպիսի արտահայտություն, որով պարզորոշ դարձվեր միտքը: Այսինքն թէ՛ այն կարգերը, որոնք միատեսակ երկվարներով են լծված, նուազ երկվարները երբեմն սայթաքում են... և այլն:

5 Տառացի՝ մինչև երեքորդ(ը) երկնքին:

6 Դրանց կանգնողաոնանք մի այլ առիթով:

Սակայն նույն հատվածի շարունակության թարգմանության մեջ արդեն կա բացահայտ սխալ, որն աղավաղում է հեղինակի միտքը: Եղնիկը գրել է՝ «...և այս կառք զարմանալիք ի հակառակ և յանձման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք. ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ արշալին, այլ յամենայն կողմանս վարդին, և ընդ հանուր արշալին. և ընդ բնաւս սլանան, և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արեւելս ընթանան. չէ ինչ արգել՝ թէ ընդ արեւմուտս ոչ արշալիցին...» (էջ 18): Հեղինակն այստեղ շեշտը դրել է աշխարհի բնույթի վրա: Նրա նպատակն է եղել ցույց տալ, որ «այս զարմանալի կառքը», այսինքն աշխարհը, որ լծված է հակառակ ու ոչ նույնատեսակ երիվարներով և զաղտնի ձեռքով կարգավորված, ոչ թե միայն դեպի առաջ է արշավում, այլ բոլոր կողմերն է վազում, բոլոր ուղղություններով է ընթանում, ամեն տեղ է սլանում և այդ բոլորին ի վիճակի է: Երբ դեպի արեւելք է ընթանում, որեւէ արգելք չկա, որ դեպի արեւմուտք արշավի... և այլն: Իսկ թարգմանության մեջ այս ամենը վերագրված է տաքսիսթունը, ցրտոսթունը, շորոսթունը, խոնավոսթունը խորհրդանշող ձիերին՝ «Իսկ այն ձիերը՝ որոնք լծուած են այս զարմանալի կառքին և կը կառավարուին թաքուն ձեռքով, իրարու հակառակ և անձման ըլլալով մէկտեղ, ոչ միայն դէպ ի առաջ կարշաւեն, այլ շորս դին կը վազեն և ամէն կողմ կարշաւեն, ամէն տեղ կը սլանան և ամէն բանի կարող են: Երբ դէպ ի արեւելք վազեն՝ արգելք մի չիկայ որ դէպ ի արեւմուտք ալ շարշաւեն...» (էջ 8):

Առաջին գրքի ին գլխում Եղնիկը գրել է՝ «Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, և ոչ զբաստ գոյ նոցա՝ եթէ զարդինս ի կալոց ուրեք կրիցեն, և ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ» (էջ 103): Գ. Խաչատրյանը թարգմանել է՝ «Եւ ոչ ալ վիշապներ երկրի բերքերը կը կրեն, ոչ իսկ զբաստ ունին անոնք, որ մէկու մը (ընդգծումը մերն է — Ա. Ա.) կալե-րու բերքերը կրեն. և զուր է կալերու մէջ ըսել՝ «կա՛լ, կա՛լ» և ոչ «ա՛ռ, ա՛ռ» (էջ 50): Անկերել է, որ այստեղ «ուրեք» մակերայն (սմի այլ տեղ, որեւէ տեղ, ինչ-որ տեղս իմաստով) չփոխված է «ոչ» դերանվան եզակի սեռականի՝ «ուրուք» ձևի հետ: Բնադրում, առանց տպագրական վրիպակի կամ ձեռագրական տարբերության, խոսվում է ոչ թե մեկի կալերի բերքերը կրելու, այլ (ընդհանրապես) կալերից բերքը ուրիշ տեղ, մի այլ տեղ կրելու մասին: Համոզված չենք, թե նշանավոր զբարարագետը ընդհանրապես կարող էր շփոթել «ուրեք»-ը և «ուրուք»-ը: Բերես նա այդպես է թարգմանել յուրովի մեկնաբանությամբ: Եթե այդպես էլ եղած լինի, ապա դարձյալ պիտի ասենք, որ հատվածի տվյալ տեղի բովանդակությունը ճիշտ չի վերարտադրվել:

Նույն գլխի վերջնամասում գրված է՝ «Եւ եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եղամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւրից յԱստուծոյ հրամանէ, զի մի՛ շոգին մաւրդոյ կաւմ Եւսեմոյ մեղաւորիցէ...» (էջ 107): Այստեղ ընդգծված նախադասությունը քերականորեն ճիշտ չի հասկացվել, այդ պատճառով էլ նրա թարգմանությունը բնագրին հարազատ չի ստացվել: Դրա դիմաց Գ. Խաչատրյանը գրել է՝ «Երբեք չըլլայ թէ մարդուն կամ անասունին շունչին վնաս հասցնէ» (էջ 52): Դատելով այս թարգմանությունից՝ կարելի է ասել, որ թարգմանիչը մատնացույց արված նախադասության համար ենթակա է գիտել վերը հիշատակված «վիշապն», որի հետ կապել է «մեղանչիցէ» բայ-ստորոգյալը, դրանից հետո «շոգին» հասկացվել է «մեղանչիցէ»-ի խնդիր, իսկ «մարդոյ» և «անասնոյ» բառաձևերը դիտվել են հատկացուցիչներ՝ «շոգին» հատկացյալով: Այլապես նախադասությունն այդպես չէր թարգմանվի: Այդպիսի մոտեցումը քերականորեն չի արդարանում: «Մեղանչել» բայը շեղոք սեռի է և տրականով խնդիր է ընդունում, ուստի «շոգին» ձևը հիշյալ բայ-ստորոգյալի խնդիրը լինել չի կարող: Իրականում այն դրված է ուղղական հոլովով և նախադասության մեջ ենթակայի պաշտոն ունի, իսկ «մարդոյ» և «անասնոյ» բառաձևերը տրականով են արտահայտված և «մեղանչիցէ» բայ-ստորոգյալի խնդիրներն են: Ըստ այդմ՝ պետք էր թարգմանել «Երբեք չըլլայ թէ անոր շունչը մարդու կամ անասունի վնաս հասցնէ»:

Երկրորդ գրքի Դ գլխի ԵՌՂ ապաքեն յայտ է՝ «Եթէ ոչ իրք հաւաստիք պատմին ի նոցանէ, այլ առասպելք կարկատունք» նախադասության (էջ 127) «ի նոցանէ» բառաձևը թարգմանված է «անոնց մասին» (էջ 63): Զեռագիրն ու տպագիրն այստեղ նույնական են, Բարգմանիչն էլ տողատակում որեւէ նշում չի արել, թե համապատասխան ձևը պիտի լինի «զնոցանէ», այլ, պարզապես, ելնելով նրանից, որ վերը պատմվում է Զրվանի և իր որդիների՝ Որմիզդի ու Արհմի մասին՝ թարգմանությունը հարմարեցրել է: Մենք նախադասությունը հասկանում ենք այսպես՝ «Մի՞թե պարզ չէ, որ եւրեւց կռվից պատմվում են ոչ թե հավաստի բաներ, այլ կցմցված առասպելներ»: Այսինքն՝ «ի նոցանէ» պետք է թարգմանել նույնությամբ, որպես «նա» դերանվան սովորական հոգնակի բացառական՝ «նրանց կողմից» նշանակությամբ և ոչ թե պատմական բացառականի իմաստով: «ի նոցանէ» ասելով՝ Եղնիկը նկատի է ունեցել ոչ թե վերը հիշվող Զրվանին, Որմիզդին ու Արհմին, այլ՝ պարսից «քեշ»-ը հորինող զբաղաշատականներին: Նրա

սովորութիւնն է՝ հակառակ հայացքներ շարադրելու, կրօններ, ազանդներ ներկայացնելու տեղեկատուող անդրադառնալ դրանք հորինողներին և սուր որակումներով ու բնութագրումներով արտահայտել իր վերաբերմունքը՝ հաճախ առանց կոնկրետ անունների հիշատակման:

Նշանակ, բացահայտելով դրադաշտական կրօնի հակասականութիւնը, նշում է, որ եթէ Զրմանր արարի: որդի ունենալու համար դո՛ւ էր մատուցում, ուրեմն պիտի լինէր մեկը, որին զո՞ւ մատուցեր. իսկ եթէ այդպիսին եղած լինէր, ապա նրան պետք էր Հանաչել սկզբնապատճառ և՛ Զրմանի, և՛ ապա Որմիդդի ու Արմանի, որոնք, ըստ մազդեզական այդ կրօնի, բարի ու չարի՝ սկզբնապատճառներ են համարվում: Այնուհետև շարունակելով իր խոսքը՝ նա գրել է՝ «Քան Զրուանայ Կրդի արարիլ տայր, որ ի վերն քան զԶրուանն էր, ինքն իսկ իրովի չկարէր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՝ առնել...» (էջ 130): Այսինքն թե՛ Ուլ Զրմանից վեր գոյութիւն ունէր, փոխանակ Զրմանի արարիլ որդի տալու, հենց ինքը չէր կարող ստեղծել երկինքը, երկիրը ու ինչ որ կա նրանց մէջ: Այսպիսի հարցումը, որ նշանակի սիրած նշաններից է, ենթադրում է դրական պատասխան: Այսինքն՝ Զրմանից վերն եղողը, փոխանակ նրան արարիլ որդի տալու, ինքն իսկ կարող էր ստեղծել երկինքը, երկիրը...: Ինչպես տեսնում ենք, միտքը պարզ ու որոշակի է: Սակայն բնականօրէն թարգմանութեան մէջ ներկայացվել է այնպես, որ վերահիշյալ ձևով չի հասկացվում: Ահա այն՝ «Փոխանակ Զրուանին տալու արարիլ որդի՝ որ Զրուանէն վեր եղած ըլլար, ինքն իսկ իր կողմէ չէր կրնար ստեղծել երկինքն ու երկիրը և ամեն ինչ որ կայ անոնց մէջ...» (էջ 64): Դ. Խաչատրյանը դուրս և հիշյալ մտքով է թարգմանել, սակայն շուրջ Զրուանէն վեր եղած ըլլար» երկրորդական նախադասութեան այսպիսի շարադրութեամբ ամբողջ միտքը հստակ չի հասկացվում, որովհետև «որդի» բառից անմիջապէս հետո՝ «որ» հարաբերականակալում է նրա հետ, և ստացվում է «որդին» որ Զրուանէն վեր եղած ըլլար: Իսկ այդ զեպրում նշանակի խոսքը դառնում է անտրամաբանական: Մինչդեռ տեսանք, որ բնագրում այն հստակորեն տրամաբանված է:

«Կուտել» բառի մի յուրահատուկ իմաստի անտեսման պատճառով պատշաճ ձևով չի հասկացվել նշանակի հետևյալ հայտնի նախադասութիւնը՝ «Զի թլպլտ և բազում արք ի մի կին մերձենացեն» այլ ոչ թէ միմեկնուցում սերմանքն կուտիցին. բանգի առաջին անկեալ սերմնն զայսն իրրև զանկորդս ի րաց թրանել» (էջ 133): Դա թարգմանված է այսպես՝ «Վասնզի թէ իսկ բազմաթիւ այրեր մէկ կնոջ մերձաւորին՝ ոչ թէ միմեկնուցում սերմերն ալ իր խառնուին իրարու. զի առաջին անգամ ինկած սերմը դուրս կը հանէ միտները՝ իրրև ավելորդներ» (էջ 66): Ուրեմն «Կուտել» հասկացվել է «իրար խառնվել» իմաստով՝ իսկեղծութիւնն «Կուտել» իմաստից: Այնինչ այդ բառը մեր հին լեզվում ունեցել է նաև «կպչել-մնալ, հիմնավորվել, հաստատվել» նշանակութիւնը, որի հետ և դործ ունենալով այլ կիրառութեան մէջ: Նշանակի ուղեցնել է ասել: Քանի որ թեկուզ և շատ տղամարդիկ մի կնոջ կմերձենան, սակայն բոլորի սերմերը չեն հիմնավորվի, որովհետև առաջին ընկած սերմը դուրս է մղում մյուսները՝ որպէս ավելորդութիւններ:

«Եւ ո՛ր իցլ այն, դոր ասենն, եթէ որ ինչ ի ճակատադրին դրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել» նախադասութեան մէջ (էջ 161) թարգմանիչը հրամանացն» բառով զիտել է ենթակա՝ «դրեալ է» ստորոգյալի մոտ և նախադասութիւնը թարգմանել այսպէս՝ «Եւ ո՛ր կը մնայ իրենց յսածը, թէ ինչ որ հրամանքը դրած է ճակատադրին մէջ՝ անհնար է որ վրիպի» (էջ 79): Այդպիսով, ճակատադրին ու հրամանքը ըմբռնվել են որպէս տարբեր հասկացութիւններ, հրամանքը դուրս է բերվել ճակատադրի մէջ բաներ դրող: Ավելի ճիշտ կլինէր հրամանացն» զիտել որպէս սկզբնականով տվեալագրութիւնն «ճակատադր» բառի համար, ինչպէս որ ժամանակին նկատել է Ի. Թոռնյանը: Իրոք, այդ երկու բառերը հոմանիշներ են, և թարգմանութեան մէջ հրամանացն» բառով նույն պաշտոնն ունի, ինչ որ «ի ճակատադրին» բառով, ուստի այն ենթակա լինել չի կարող և թարգմանելիս կարելի է անտեսել որպէս ավելագրութիւն: Այսպէս՝ «Եւ որտե՛ղ է մնում այն, որ ասում են, թէ ինչ ճակատադրով (տառացի՝ ճակատադրում) զրված է, անհնար է, որ վրիպի»:

Նույն դրբի ին զլիսի վերջին պարբերութեան մէջ բնագրի «պատճառաւոր» բառը (էջ 191) թարգմանված է «ստեղծութեան» (էջ 94), իսկ տողատակում հարցականով նշված է «բախտաբախ»։ Վերջինս ավելի մոտ է իր իմաստով: Նշանակի «Զկոռնայն և զայլոց աստեղաց պատճառաւորաց ասիցեն» արտահայտութեամբ նկատի ունի արտաքին զիտեականների ասածը աստղերի մասին: Նա պատճառաւոր» բառը մինչ այդ էլ է գործածել՝ «պատճառ եղող, պատճառ դարձող» նշանակութեամբ: Ըստ աստղագիտականի ու աստղապաշտների՝ զանազան երևութները՝

7 Հմմտ. «Հատընտիր ընկերացութեան ի մատենագրաց նախնեաց, Վիեննա, 1891, էջ 43, ծան. 13:

ծնունդների, մահվան և այլն պատճառ են դառնում աստղերը (որը մերժում է Եզնիկը), այդ առումով էլ աստղերը պատճառավորենք են, Տվյալ հատվածում թեև չի խոսվում աստղագիտականության մասին, սակայն հիշյալ բառով ակնարկում է սա:

Մասամբ ճիշտ չի հասկացվել հերոսը գրթի Ը գլխի սկզբնամասը: Երարձեալ և լուսնի՝ թէ ոչ իւր առանձինն իցէ լոյս, նախ նոցա բանն ստի՝ զոր ասեն, եթէ ի յաճախելն յամենայն իմիք՝ աճէ հիւթն որ ի նմանէ, և ի լնուլն՝ լնու, և ի պակասելն՝ պակասէ (էջ 214): Թարգմանված է՝ Երարձեալ, եւր կ'ըսեն, թէ լուսինն ինք առանձին լոյս չունի, ասով հերքած կ'ըլլան իրենց խօսքը, քէ ուր եւ է իւրի մէջ բան մը շատեալով՝ ճոճ նդռը նիւթը կ'աճի, լեցունելով՝ կը լեցուի, և պակասելով՝ կը պակսի (էջ 106):

Նախ նշենք, որ մատնացույց արված հատվածում տպագիր բնագիրը թերութուններ ունի, որոնք, ի դեպ, ջատ ճիշտ կերպով նկատված ու վերացված են Վ. Մարիեսի կողմից, փարիզյան վերջին հրատարակության մեջ: Բուժ նշանը պետք է լինի ոչ թե խիստ բառաձևի, այլ՝ խիստ լեզվաձևի վրա: Երրորդական մեջ թի նման է՝ ձեռագրի ընդօրինակման ժամանակ, հավանաբար, ստացվել է ճեմա դերանվան տրական-ներդրականից՝ հաջորդող ճեմ էական բայի կցումով՝ թի նմա է || ի նմայն է || ի նման է || ի նման է՝ ճանապարհով: Ուրեմն դա էլ պետք է ընկալել ոչ թե բացառականի, այլ՝ ներդրականի իմաստի արտահայտումով, էական բայի հետ, ինչպես ուղղված է վենետիկյան վերահրատարակության, այլև Գ. Խաչատրյանի հրատարակած մեջ: Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, որ տվյալ կիրառության Երարձեալ բառը ոչ թե ընդհանրապես չեղութա իմաստով է (որպիսին, իհարկե, կա գրաբարում), այլ՝ հենց Երարձեալ, Թացութուն, Թաց նյութ, խոսնավություն իմաստով:

Գ. Խաչատրյանի թարգմանության մեր ընդգծած մասում ավանդ է՝ երբ եւ է իրի մէջ բան մը շատեալով՝ հոն եղող նիւթը կ'աճի: Եթե դա հասկանանք այնպես, որ որեւէ իրի մեջ մի նոր բան ավելանալիս նրա մեջ ելած նյութն աճում է, ապա դա ճիշտ չի լինի, որովհետեւ տվյալ դեպքում ոչ թե այնտեղ եղած նույն նյութն է աճում, այլ նրա վրա ինչ-որ բան է ավելանում: Իսկ եթե ընդունենք էլ, թե դա ճիշտ է, ապա ինչու պիտի ասվեր այնտեղ, որտեղ բանավեճ է մղվում լուսնի մասին արտաքին գիտնականների ունեցած հայացքների դեմ:

Բանն այն է, որ Եզնիկն իր երկի այս հատվածում հիշեցնում է ընդդիմակա իմաստասերների կարծիքը՝ այն մասին, որ լուսնի աճելու հետ աճում է հյութ, խոսնավություն, Թացութուն՝ պարունակող առարկաների մեջ եղած այդ պարունակությունը, լուսնի նվազելու հետ նվազում և այլն: Միայն թե այդ հատվածում լուսնին նախապես հիշատակած լինելով՝ Երարձեալ մեջ հեղինակը չի կրկնել, կարծես թե այդպիսով անորոշություն է ստացվել: Իսկ որ առարկաների հյութի ավելացումը կապվել է լուսնի աճի հետ, պակասելով՝ նվազելու հետ՝ անկասկած է: Դա ջատ պարզ երևում է հենց նույն հատվածում: Հմմտ. Եւ յնւրոպն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրքն ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ (էջ 215): Ուրեմն վերը նշված հատվածը հասկացվում է այսպես՝ Երարձեալ (պնդում են), թե լուսնին սեփական լույս չունի (Դրանով) նախ ժխտվում է իրենց ասած այն խոսքը, թե (լուսնի) մեծանալու ժամանակ ամեն մի առարկայի մեջ աճում է այնտեղ եղող հյութը: Երանալու ժամանակ լցվում է, պակասելու ժամանակ՝ պակասում...: Եզնիկն, իհարկե, դեմ է, որ հակառակորդներն իրենց պնդումներով ժխտում են իրենց իսկ ընդունած կարծիքը: Նա ևս հավատացած է, որ լուսնի փոփոխություններն առաջ են բերում մթնոլորտային և այլ կարգի փոփոխություններ:

Եզնիկը գրել է՝ Եւ զաճելն և նուազել լուսնի՝ իբրեւ ընդ պատենիւք իմն մտանել և ելանել ասեն իմաստունքն (էջ 216): Այսինքն՝ Եւ լուսնի աճելն ու նվազելն էլ գիտնականները որպես ինչ-որ պատյանի տակ մտնել ու ելնել են համարում: Գ. Խաչատրյանը թարգմանել է՝ Եւ լուսնի աճելն ու նուազելն ալ իմաստունները կը վերագրեն այն բանին, որ ան իր պատենին մէջ կը մտնէ եւ կ'ելլէ անկէ (էջ 107): Չենք խոսում հավելումների մասին, սակայն առարկում ենք շարժ պատենիւք իմն-ը թիր պատենին մէջ թարգմանելու դեմ: Բնագրում նշված է ոչ թե լուսնի պատյանի (°), այլ ինչ-որ պատյանի մասին:

Սխալ է հասկացված ու թարգմանված հաջորդ գլխի երկրորդ պարբերության մի մասը: Բնագրի այդ մասում գրված է՝ Եւ չէ հնար լուսնի յերկիր իշանել. որպէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Աստուծոյ զլուսնոյն արեւնագոյն լինելոյ զկերպարանսն՝ դիւի նմանել լուսնի բարբառնչեն, թէ զլուսնի իշուցանիցեն (էջ 217): Թարգմանված է՝ Եւ կարելի չէ, որ լուսնին իշնէ երկրի վրայ: Զոր օրինակ, կախարդները տեսնելով, որ ժամանակ ժամանակ Աստուծոյ հրամանով լուսնին կերպարանքը արեւնի գոյն կ'առնէ, կը բարբառնչեն, թէ դեւ լուսնին

նմանելով՝ զայն վար կ'իջեցնէ՝ (էջ 108)։ Ստացվել է այնպես, որ ղևն է լուսինն իջեցնողը։ Սակայն, ըստ բնագրի, իջեցնելու գործողության տեղը ոչ թե ղևն է, այլ՝ կախարդները, որոնք բարբառում են, թե իրենք լուսինը վայր կ'իջեցնեն։ Ամբողջ հատվածի բովանդակությունը հետևյալն է՝ Եվ Հնարավոր չէ, որ լուսինն իջնի երկրի վրա։ Ինչպես կախարդները տեսնելով, որ լուսին կերպարանքը երբեմն աստծու հրամանով արյան դույն է ստանում, շաղկրատում են, թե լուսինը ղևի է նմանվում, թե (իրենք) կարող են լուսինն իջեցնել (տառացի՝ կ'իջեցնեն)։ Եվ Եղևիկին հայտնի է, որ կախարդները ընդհանրապես հոխորտում են, թե կարող են ղևերին հնազանդեցնել։ Ըստ այդմ էլ՝ լուսինը ղևի նմանեցնելով՝ այն վայր իջեցնելու մասին են խոսում։

Որ մատնացույց արված հատվածում լուսինն իջեցնելը վերաբերում է կախարդներին (և ոչ թե ղևին)՝ պարզ երևում է և բնագրի հաջորդ պարբերության մեջ, որտեղ ասված է՝ Եվ քանի՞ անթիւ րիւրուց կախարդաց են յերկրի. եթէ իւրաքանչիւր ոք ի նոցանէ իջուցանել կարէր ղևա, ոչ երբէք տային նմա ելանել յերկինս։ Եվ դա էլ ճիշտ է թարգմանված՝ Եվ քանի՞ անթիւ անթիւ բիւրերով կախարդներ կան երկրի վրայ, եթէ անոնցմէ իւրաքանչիւրը կարենար իջեցնել ղայն, երբեք թոյլ չէին տար, որ ան ելլէ երկինք։ Սա տրամաբանորեն հետևում է մատնանշված հատվածին։

Հայտնի է, որ Եղևիկը, խոսելով Պատմութի ուսմունքի և այն օգտագործած աղանդավորների՝ գաղափարների մասին, պատմության նշանավոր ԵՍՏՈՒՄ տեղիքին (Եփեսոս, զգալիորեն նշանակություն) փոխարեն գործածել է Եփեսոս։ Ինչպես նկատված է՝ ԵՍՏՈՒՄ ԵՍՏՈՒՄ-ի հետ չփոխելու իսկ ԵՍՏՈՒՄ-ը նշանակում է ճշատուկ, սեփական, որ առանձնապես մեկին է պատկանում։ Դա Եփեսոս ձևով Եղևիկին իր երկրում գործածել է երեք անգամ (էջ 204, 224) և երկու տեղ տվել է այսպիսի բացատրություն՝ առանձինն ինչ ուրուք, այսինքն՝ սեփական, առանձնապես մեկին պատկանող, մեկին հատուկ, Գ. Խաչատրյանի թարգմանության մեջ առաջին գործածության հետ տրվող բացատրությունը աշխարհաբարով մոտավորապես արտահայտված է. այսպես՝ Եփեսոս պատմականները աստուած նկատեցին ԵՄ Հիւլէն, ԵՄ Իդոսը, առաջինը նիւթն է եւ երկրորդը՝ առանձնապատուկ Բաւ մը (էջ 101)։ Սակայն այլ է պատկերը մյուս գործածության թարգմանության մեջ։ Բնագրում կարդում ենք՝ ԵՄ Եփեսոս և աղանդացի առեալ նովին դանդաղեն՝ թէ որպէս Աստուածն էութեամբ էր, նոյնպէս և Հիւլէն և Իդոսն՝ որ է առանձինն ինչ ուրուք (էջ 224)։ Դրա դիմաց թարգմանիչը գրել է՝ ԵՄ Եփեսոս մտքով աղանդավորներն ալ կը դանդաղեն, թէ ինչպէս որ Աստուած էութեամբ էր Աստուած, նոյնպէս են նաև Հիւլէն եւ Իդոսը, այն է՝ առանձին էութիւններ (էջ 111)։ Ինչպես տեսնում ենք, Եփեսոս է՝ առանձին էութիւններ արտահայտությունը դրված է չոր է առանձինն ինչ ուրուք արտահայտության տեղ, որը, սակայն, նրա թարգմանությունը չէ։ Թարգմանիչը իր ասածը տարածել է Հյուլէի և Իդոսի վրա, այնինչ չոր է առանձինն ինչ ուրուք բնագրում ասված է միայն Իդոսի մասին։ Ուրեմն թարգմանության մեջ որիք բան է գրվել նրա փոխարեն, և այն մնացել է լրացման ված։ Ամբողջ հատվածի թարգմանությունը կլինի այսպես՝ ԵՄ Եփեսոսից ելնելով՝ աղանդավորներն էլ նույն ձևով ցնդաբանում են, թե ինչպես որ աստված էր էութեամբ (աստված), նույնպես էլ Հյուլէն է և Իդոսը, այսինքն՝ մեկից ելնելու առանձնապատուկը։

Բնագրի 227-րդ էջի և ոչ յայլոց ուսանել կամեցան նախադասությունը թարգմանվել է ԵՄ չկամեցան որիցներու ալ սորվեցնել (էջ 113)։ Գործ ունենք բացահայտ սխալի հետ. Եյայլոց ուսանել նշանակում է ոչ թե Եփեսոսիցներին սովորեցնել, այլ՝ Եփեսոսիցներին սովորեցնել։

Գ. Խաչատրյանը միանգամայն ճիշտ է վարվել, որ բնագրի 236-րդ էջի սեփա զճշմարտութեանն խելամուռութիւն չէր պարտ դատարկ թողուլ նախադասության մեջ, ելնելով հատվածի բովանդակությունից, զգճշմարտութեանն բառաձևը դարձրել է զգճարտարութեանն, սակայն թարգմանելիս հավանաբար թյուրիմացությամբ նախադասությանը դրական բնույթ է տվել՝ Եփեսոս վայել էր որ ճարտարութեան խելամուռութիւնը թողուր դատարկ (էջ 11)։ Ոչինչ, որ Եփեսոս միադիմի բայը փոխարինել է որից բայով, սակայն ժխտական ձևը պիտի պահպաներ։ Չենք վիճում, որ ժխտական մասնիկը տպագրության ժամանակ կարող էր դուրս ընկած լինել, բայց փաստ է, որ նախադասությունը հակառակ մտքով է ներկայանում մեզ։

Բնագրի Բայց և տէր արարածոց զարդարն միայն զիւրոյ կոչեցնէ նախադասությունը (էջ 256) թարգմանվել է Բայց ինչո՞ւ միայն արարածներուն տէրը կը կոչեն արդար (էջ 128)։ Այսպիսի հարցումով ստացվում է այն, թե (մարկիոնականները) արարածների տիրոջ են արդար կոչել։ Սակայն իրականում նրանք, այսպես ասած, արդար աստծուն են արարածների տեր կոչել։ Ուրեմն թարգմանությունը պիտի լիներ Բայց ինչո՞ւ միայն արդար կը կոչեն արարած-

ներու տէր»։ Հայտնի է, որ մարկիոնականները ընդունում էին երեք նախասկիզբ («առաջ»), երեք աստված՝ օտար բարի աստվածը, արդարը և շարը (Հյուսիս)։ Ըստ նրանց, իբր, արդարը և շարը (Հյուսիս) պայմանավորվում են միասին արարածներ ստեղծել։ Եղնիկը քննադատում է այդ գաղափարները՝ նշելով, եթե այդպես է, ապա այդ աղանդավորներն ինչու են միայն իրենց ընդունած արդար աստծուն համարում արարածների տեր, չէ՞ որ նա արարածներ էր ստեղծում շար աստծու (Հյուսիսի) հետ համատեղ (ուրեմն երկուսը միասին պիտի կոչվեին արարածների տերեր)։

Կարևոր ենք համարում նշել նաև թարգմանության մեջ իրեն ղգալ տվող մի այլ երևույթի մասին։ Ինչ խոսք, զրաբարից աշխարհարար թարգմանողի համար կարելի է թույլատրելի համարել, երբ նա, հարմար գտնելով, զրաբարյան որոշ բառեր ու ձևեր պահպանում է, թողնում առանց թարգմանության։ Եթե դրանք չեն խանգարում ընթերցողին՝ համապատասխան նյութն ընկալելու, ապա լավ են և այդպիսով իրենց հերթին նպաստում են աշխարհարարի հարստացմանը։ Սակայն դա չի կարելի ասել պահպանված այնպիսի բառերի ու ձևերի մասին, որոնք նշանակության տարբերության պատճառով անձանթ ու անմատչելի են մնում ընթերցողի համար։ Այս թարգմանության մեջ թողնվել են մի քանի այդպիսի բառեր իրենց հին իմաստներով, ինչպես՝ «հրաման», «հրաման»՝ «բախտ, ճակատագիր» իմաստով (էջ 79), «կառի» («կարեաց»)՝ «կրքեր» իմաստով (էջ 112) և այլն։ Լավ կլիներ, որ այդպիսիները աշխարհարար թարգմանվելիս համապատասխան հասկանալի իմաստներով, քանի որ աշխարհարարում դրանք այդպիսի իմաստներով չեն ընկալվում։ Առանց թարգմանության են մնացել նաև այնպիսի բառեր, որոնք աշխարհարարում գրեթե գործածություն չունեն, ինչպես՝ «ողոխել», «ղաղաղել» և այլն։ Իհարկե, այդ կարգի բառերը ևս պիտի տրվեին աշխարհարար համարժեքներով։

Իբրև եզրափակում նշենք, որ մեր դիտողությունները կոչված չեն ստվեր գցելու երախտավոր թարգմանչի կատարած դժվարին, բայց լավ գործի վրա։ Մեր ցանկությունն էր այսպիսով օգնել հետաքրքրվող ընթերցողին։

О ЗАПАДНОАРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ ПРОИЗВЕДЕНИЯ ЕЗНИКА КОХБАЦИ

А. А. АБРААМЯН

Р е з ю м е

Труд знаменитого мыслителя-философа пятого века Езника Кохбаци «Опровержение сект» является одним из ценнейших памятников древнеармянской литературы. Он служил объектом исследования как армянских, так и зарубежных ученых. Об интересе, проявленном к этому своеобразному труду, свидетельствуют не только многочисленные исследования, но и переводы на некоторых языках. Научному миру известны переводы на русском, французском, немецком языках. Существуют также отрывочные переводы. Первый цельный перевод с древнеармянского языка (грабара) на западноармянский успешно осуществлен переводчиком-филологом Г. Хачатуряном. В статье характеризуется и оценивается трудная, но очень полезная работа переводчика. Далее говорится о пропусках текста, также указывается на некоторые неточности, допущенные в этом хорошо сделанном переводе.